

# Ո Ղ Ֆ Ե Դ Ե Ս Ե Ա Յ

## ԱՍԱՑԵԱԼ ՄՐԲՈՅ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՉԱԼԻՈՅ

### ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,

ԲԱՆ ասացեալ՝ բարառնական,  
 տաղի՛ւ չափեալ՝ հոմերական.  
 Խաւսեալ ձայնի՛՝ ողբերգական,  
 վասն եղեսեայ՝ մեծի առման:  
 Ի թուականիս՝ հինգ հարիւրի,  
 եւ ինընսուն՝ ութերեկի.  
 Քսան եւ երեք՝ Դեկտեմբերի,  
 յերբորդ ժամու՝ յուր Շաբաթի:

Ա. Ծ Դ ողբացէ՛ք՝ եկեղեցիք,  
 հարսունիք վերինն՝ առաջաստի.  
 Քորք եւ եղբարք՝ ի՛մ սիրելիք,  
 որք յընդհանուր՝ կողմ աշխարհի:  
 Քաղաք եւ գեւդ՝ առ հասարակ,  
 ա'զգ եւ ազինք՝ որ է՛ք յերկրի,  
 Հաւատացեալ ըք՝ Քրիստոսի,  
 երկրպագունք՝ նորին խաչի:  
 Նա՛խ առաջին՝ ձեզ քարքանիմ,  
 արփիափայլ՝ եւ երաշալի.  
 Զորեֆկերպից ըն՝ նըմանեալ,  
 յերկրի աքո՞նք՝ երկնաւորի:  
 Որ է՛ք բդիումն՝ ասուուածային,  
 ի յաղբերէն՝ աղենային.  
 Յորս առ ի ձեւնց՝ քառակտակ,  
 յորդահոսան՝ զե՛տ հոլովին.  
 Արբուցանէ՛լ՝ ըզուինեզերս,  
 աւետարեր՝ բդիսմա՞մբ բանին.  
 Ա. Ո որս խաւսիմ՝ աղերսալի,  
 դուք լսեցէ՛ք՝ լալոյս ճայնի:  
 Երուսաղէմ՝ քաղաք մեծի,  
 թագաւորին՝ երկնաւորի.  
 Ուստի աւրէնի՛ եւ մարգարէք,  
 աղբերաբար՝ բդիսեալ յերկրի:  
 Յորմէ որդին՝ հա՛ւր միածին,  
 լո՛յս ծագեցաւ՝ անհանելի.  
 Եւ ի՛նձ գրեաց՝ երնութիւն,  
 յառաջագոյն՝ քան զամենի.

Քանզի նախսիի՝ հաւատացի,  
 զորդի ընդ հաւը՝ դաւանեցի.  
 Որով քէ ոչ՝ յանդըգնէի,  
 զի՞ս վեհագոյնն՝ քեզ ասէի:  
 Ի քեզ սպանին՝ գՏէրն ի փայտի,  
 ես ի հեռուստ՝ երկիրպագի.  
 Թէպէտ եւ այժմ՝ ի մի հոգի,  
 երկրպագեմք՝ նորին խաչի:  
 Բայց լո՛յր եւ դու՝ ո՛վ սիրելի,  
 տարագրելոյս՝ աղաղակի.  
 Լէ՛ր մըխիթքար՝ ցաւակցելի,  
 եւ ցո՛յց ինձ դեղ՝ բեկեալ սըրտի:  
 Եւ դու Հըռում՝ մա՛յր քաղաքաց,  
 զերապայծառ՝ եւ պատուելի.  
 Մեծին աքոռըդ՝ Պետրոսի,  
 առաքելոց՝ զըլիաւորի:  
 Եկեղեցիդ՝ անշարժելի,  
 ի կեփայիսն՝ շինեալ վիմի.  
 Դրանց դըժունց՝ անյաղքելի,  
 եւ կնիք երկնիցըն՝ բացողի:  
 Ո՛րք վայելուչ՝ քազմաստեղի,  
 եւ հաստարմատ՝ տունի Պաւլոսի.  
 Ուողելով՝ արեամք նորին,  
 որպէս ըզդրախտն՝ որ յադենի:  
 Մասին հասեալըդ՝ Ղուկայի,  
 աստուածային՝ մատենագրի.  
 Ա. հա՛ առ քեզ՝ բանը խաւսիմ,  
 վինակ ւարոռը՝ թաղէի:

Լուր ի հեռուստ՝ իմոյս ձայնի,  
լե՞ր ողբակից՝ ինձ յայս վայրի.  
Լա՞ց ընդ լացողս՝ որպէս ասի,  
ըստ գրեցելումն՝ առ քեզ բանի:  
Չեռլ՛ն մատո՛ վաղվաղակի,  
ինձ կապելոյս՝ ի տան բանտի.  
Ա՛ն ըզլըրէժս՝ աններելի,  
ի քընամւոյն՝ զիս գերողի:  
Առ քեզ են բանի՝ իմ փարելի,  
ո՞վ դու բաղա՛ յոյժ պանծալի.  
Զոր կոստանդեայ՝ քաջաւորի,  
շինեալ ի սկիզբն՝ Ասիայի:  
Երկրորդ եղեալ՝ երուսաղէմ,  
եւ նոր Հըռոմ՝ զարմանալի.  
Սիրեցելոյն՝ աշակերտի,  
արռո գոլով՝ փոխադրելի:  
Ժողովարան՝ սուրբ վըլայից,  
սուն եւ տեղի՝ մաքրագունից.  
Դահոյժ հըզաւր՝ մեծ արքայի,  
յերկրի նըման՝ երկնաւորի:  
Լուր ինձ եւ դու՝ խոնարհարար,  
ունկլ՛ն մատո՛ լալոյս ձայնի.  
Զի սեփիական՝ ես քո էի,  
մայրաքաղաք՝ քում վիճակի.  
Ի քէն շինեալ՝ յիս տանարի,  
անուանակիր՝ քոյդ խորանի.  
Հանգոյն վերինըն՝ Սիովնի,  
անհամեմատ՝ երկրաւորի:  
Բայց այժմ քողեր՝ զիս ամայի,  
իրեւ ըզբու՝ աւերակի.  
Կամ որպէս մարդ՝ անուգնական,  
եւ ի մեռեալս՝ անյիշելի:  
Զոր պաղատիմ՝ զարքուցանել,  
ըզ զարութիւնդ՝ անվանելի,  
Հասուցանել՝ քազմապատիկ,  
ըզվրէծ ի ծոց՝ իմոյն նեղչի:  
Ահա՛ զոշեմ՝ առ դրունը քո,  
մայրաքաղաքդ՝ եզիպոսի.  
Աղեքսանդրոսըդ՝ ցանկալի,  
անուանակիր՝ քում շինողի:  
Որ ես արռո՝ դու Մարկոսի,  
մեզ աւետեաց՝ քարոզողի.  
Որ եւ դրախտին՝ Աստուածայնոյ,  
սունկ բանաւոր՝ ի քեզ տընկի.  
Արմաւենիք՝ ծաղկեալ ի տան,  
հոյլ արդարոց՝ Տեան ընծայի.  
Եւ որպէս մայրէ՝ Լիքանանու,  
ե՞ն միանձունք՝ քում նահանգի.

Ճրեշտակերամք՝ եւ խաչակիրք,  
եւ անմարմնոց՝ նըմանք յերկրի:  
Հիմն եւ արմատ՝ ուղղափառաց,  
տարամերժող՝ հերձուածողաց,  
ինձ գումարք՝ հայրապետաց,  
որ առ ի քոյդ՝ նախազանի.  
Թէպէտ եւ չեն՝ այժմ ի միջի,  
այլ լոկ երա՞զ՝ են զիշերի:  
Քանզի եղեր՝ եւ դու այրի,  
կարծեմ նըման՝ ինձ ողբալի.  
Երբեմն էամ՝ մեք ըղձալի,  
բայց այժմ եղագ՝ յոյժ եղկելի:  
Որով հայցեմ՝ ով բաղձալի,  
ե՛լ ողբակից՝ ինձ յայս վայրի.  
Զի հաւասա՛ր՝ հանգունակի,  
անաւրինաց՝ եղագ զերի:  
Արդ մըլիթար՝ յայս աղէտի,  
մեզ երկոցունցու՝ ա՛յս լինիցի.  
Մաքուր մաղթան՝ աղերսալի,  
մատուցանել՝ Տեան արարչի:  
Զի բարկութիւնն՝ որ ըստ մեղաց,  
ի բաղցրութիւն՝ փոխարկեսցի.  
Ի տեսանել՝ մեզ ըզբարի,  
ւի քընամիս՝ լինել չարի.  
Թէ աստանաւր՝ հանոյացի,  
եւ երէ անդ՝ հասուցանի,  
Փափագ ըղձից՝ մեր կատարի,  
սյարգեւողէն՝ յամենայնի:  
Բանի՛ւ դասմամք՝ ընդ քեզ կազմի,  
ո՞վ Անտիոք՝ քոյր սիրելի.  
Առաքելոց՝ սուն եւ տեղի,  
յԱւետարանըն՝ Մատրէի.  
Ցորում անունն՝ ըստանչելի,  
նախ առաջին՝ ի քեզ դընի.  
Որ քիստոնեայն՝ վերակոչի,  
երկրպագուացը՝ Քիստոսի:  
Խմ մերձաւոր՝ եւ անձկալի,  
յուրախութեան՝ ժամանակի,  
Ընդէ՞ր շհասեր՝ վաղվաղակի,  
ինձ ի թիկուն՝ աւգնականի.  
Այլ քոյլ ետուր՝ վարն խեթի,  
մատնել ի ձեռս՝ անաւրինի:  
Արդ լուր իմոյս՝ դառըն ձայնի,  
եւ լե՞ր կըցորդ՝ այրման սըրտի.  
Լա՞ց ընդ լալիս՝ յամենայնի,  
լե՞ր տրրտմակից՝ քախծեալ սըրտի:  
Ըստ առաքելոյն՝ սուրբ երամանի,  
լալ ընդ լացողորն՝ վշտալի: